12 սեպտեմբերի 2019 թվականի N 1302 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 241-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը հաստատելու մասին» N 241-Ն որոշման N 2 հավելվածը լրացնել 3-7-րդ կետերով.

«	3.	Մեղրի քաղաք, Մեղրի համայնք, ՀՀ Սյունիքի մարզ, նախկին անվանումը՝ Արևիք գավառ	Չրագործությունն ավանդաբար եղել և շարունակում է մնալ Մեղրու տարածաշրջանի ոչ նյութական մշակութային ժառանգության հիմնական բնագավառը, որը գնալով զարգացման նոր միտումներ է դրսևորում: Մերձարևադարձային չոր կլիմայի և աշխարհագրական դիրքի, ինչպես նաև բնակչության սերնդեսերունդ փոխանցված ժողովրդական հմտության շնորհիվ՝ Մեղրիում աճող բազմատեսակ մրգերն առանձնանում են յուրահատուկ համային հատկանիշներով: Դրանցից պատրաստվող չրերը, հատկապես թուզն ու արքայանարինջը, վերամշակումից հետո պատվում են մրգի քաղցրությունից առաջացած բնական շաղարշով: Յուրահատուկ համի ու շուկայական տեսքի շնորհիվ՝ Մեղրիում պատրաստված չրերն ամենուրեք մեծ պահանջարկ ունեն: Չրագործությունը եղել ու մնում է Մեղրու բնակիչների ավանդական զբաղմունքներից: Դրանով զբաղվում է տնտեսությունների մեծ մասը: Աշնանը արքայանարնջի 2-3 մետրանոց շարանները վարագույրի նման կախվում են գրեթե բոլոր մեղրեցիների բակերում, իսկ մյուս բոլոր մրգերը չորացվում են ուռենուց հյուսված խսիրների վրա: Արտադրանքը էկոլոգիապես մաքուր է, հավելումներից զերծ: Չրերը և բազմատեսակ անուշեղենը՝ ալանին, սուջուխը, մուրաբաները եղել են մեղրեցու ավանդական ուտեստի անբաժանելի մասը: Սպառողների շրջանում մեծ պահանջարկ ունեն 1930 թ. գործող Մեղրու պահածոների և 1955 թ. գործող գինու գործարանների արտադրանքները: Տասնամյակներ առաջ ոսկե մեդալի արժանացած «Արևիք», «Մեղրաձոր», «Նեկտարենի» խաղողի գինիներին վերջին տարիներին ավելացել են նռան, մոշի, մուշմուլայի տեսականիները: Մեղրու տարածքում կա պատմամշակութային շուրջ 100 հուշարձան՝ եկեղեցիներ, ամրոցներ, կամուրջներ, խաչքարեր, ջրանցույցներ (քյահրիզ), ժողովրդական ճարտարապետության եզակի նմուշներ հանդիսացող բնակելի տներ: Մետաքսի ճանապարհին գտնվող Մեղրին ի վերուստ հայտնի է եղել նաև որպես կրթության կենտրոն: 1881 թ. Մեղրիում բացվել է երկսեռ դպրոց, որտեղ ֆրանսերեն է դասավանդվել: 1882 թ. բացվել է հանրային առաջին գրադարանը, որը ամսագրեր է ստացել Պետերբուրգից: 1901 թ. արտերկրում ուսանող մեղրեցիների ջանքերով Մեղրիում բացվել է Հայաստանում առաջին առևտրի սպառողական կոոպերացիան:	Հայաստանի հարավային դարպաս համարվող Մեղրին երկու կողմից սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը, իսկ մեկ կողմից Իրանի Իսլամական Հանրապետությանը, որից բաժանվում է Արաքս գետով: Մեղրի համայնքը զբաղեցնում է 664 քառ. մ. տարածք, որն իր մեջ ընդգրկում է բնակլիմայական վեց հիմնական գոտիներ՝ անապատ, կիսանապատայինից մինչև լեռնաձնային տարածքներ՝ ծովի մակերևույթից 320-ից մինչև 3735 մ բարձրություն: Մեղրի համայնքում են գտնվում Մեղրի և Ագարակ քաղաքները և 11 գյուղական բնակավայրեր: Հնամենի Մեղրի քաղաքը բաղկացած է 2 թաղից՝ Մեծ թաղ և Փոքր թաղ: Վերջինս հարուստ է ճարտարապետական ինքնատիպ լուծումներ ունեցող ժողովրդական տներով: Մեղրու տները հիմնականում կառուցվել են լեռների ստորոտներում՝ խնայելով բարեբեր հողը: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, անասնապահությամբ, մի մասը ընդգրկված է հանքարդյունաբերության ոլորտում: Մեղրիով է անցնում Իրան-Հայաստան ավտոմայրուղին:

4.	Աշնակ գյուղ, ՀՀ Արագածոտնի մարզ	Պատմական Աշնակ գյուղը եղել է Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի խոշոր բնակավայրերից (նախկինում՝ նույնպես Աշնակ): Աշնակի վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է 5-րդ դարին: Պատմիչ Եղիշեն հիշատակում է, որ այն եղել է մեծ բնակավայր, արքունի ձմեռանոց և զորակայան: Գյուղում կա 4-5-րդ դարերի եկեղեցի, որը նորոգվել է վերջին տարիներին: Գյուղից հարավ գտնվում է մ. թ. ա. 2-1 հազարամյակի ամրոցը: Գյուղի տարածքում պահպանվել են հայոց Արշակ 2-րդ արքայի ամրոց-ամառանոցի բեկորները և բազմաթիվ այլ հնավայրեր: Աշնակում հայտնաբերվել են վաղ քարեդարյան գործիքներ, որոնք հնագետների կարծիքով շուրջ 15-17 հազար տարեկան են: 1918-1920 թթ. Աշնակը վերաբնակեցվել է Մեծ եղեռնից փրկված՝ Արևմտյան Հայաստանի Սասուն գավառի տասնյակ գյուղերի գաղթականներով (հիմնականում Փիրշենք, Մշգեղ, Մկտենք, Ճրթնիկ, Խաբլջոզ, Բալոենք, Հոսնուտ, Տալհոր, Գոմք, Գոշակ, Քաճռենք և այլ բնակավայրերից): Վերաբնակներն իրենց հետ Աշնակ բերեցին Տարոն աշխարհի մշակույթը՝ հատկապես Սասնո և Մշո պարերն ու երգերը, որոնք ստեղծվել են դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում: «Աշնակցիների պարը» հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության բացառիկ արժեքներից է: 1926 թ. Աշնակում կազմավորվել է «Սասուն» ազգագրական պարախումբը, որը 1957 թ. ճանաչվել է Մոսկվայում տեղի ունեցած երիտասարդական միջազգային փառատոնի հաղթող և արժանացել ոսկե մեդալի: Աշնակցիները ոչ միայն ավանդական երգ ու պարի, այլև էպոսասացության, բարբառի, ավանդական նյութական և հոգևոր մշակույթի կրողներն են: Աշնակցի ասացողների պատումները տեղ են գտել «Սասնա ծռեր» էպոսում: Աշնակում գործում է Գևորգ Չաուշի տուն-թանգարանը, ուր ամեն տարի մայիսի 27-ին մեծ շուքով նշվում է հայդուկապետ Գևորգ Չաուշի նահատակության օրը: Գտնվելով նախալեռնային գոտում և ունենալով Արագածի կենարար ջուրը՝ Աշնակում աճում է աշխարհի լավագույն ծիրանը, որի մասին ողջ հայությունը գիտի Գևորգ Էմինի «Աշնակցիների պարը» հայտնի բանաստեղծությունից:	Աշնակ գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1420 մ բարձրության վրա՝ Արագած լեռան ստորոտին, մայրաքաղաքից մոտ 60 կմ հեռու: 2016 թ. տվյալներով Աշնակն ունի շուրջ 3000 բնակիչ: Աշնակում են ծնվել մշակույթի և պետական շատ գործիչներ, գիտնականներ, գրողներ: Գյուղն ունի շուրջ 4000 հա հողատարածք, որից 400-ը վարելա-հող է, 120 հեկտարը՝ տնամերձ, իսկ մնացածը՝ արոտավայրեր: Բնակ-չությունը զբաղվում է անաս-նապահությամբ և այգեգործությամբ: Աշնակի տնտեսության հեռա-նկարային ու գերակա ճյուղը ծիրանի մշակությունն է: Գյուղը բարեկարգ է, գազաֆիկացված, ունի ոռոգման և խմելու ջրի նորոգված ցանց: Աշնակում գործում է ավագ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, հանդիսությունների սրահ, բուժկետ և նորակառույց մատուռ:

5.	Քաղաք Գորիս, ՀՀ Սյունիքի մարզ	Գորիսի հին անվանումներից են՝ Գերյուսի, Գերուսի, Գորայք, Գորես, Գորիս, Հին Կյորես, Կյուրիս, Կորուս, Կորու, Կուրիս, Ջանգիզուր, Ջանկյազուր, Կյուրյուս: Ենթադրվում է, որ տեղանվան հիմքում ընկած են հնդեվրոպական նախալեզվի «գուռռ»՝ «ժայռ» և «էս»՝ «լինել» բառերը, այսինքն՝ Գորիս-Կյորես նշանակում է ժայռոտ տեղանք: Քաղաքի տեղում հնագույն ժամանակներից բնակավայր է եղել: Գորիսի մասին հնագույն հիշատակումը գալիս է ուրարտական թագավորության ժամանակաշրջանից: Ռուսա I թագավորը մ. թ. ա. 8-րդ դարում թողել է մի սեպագիր, որտեղ իր նվաճած 23 երկրների մեջ նշում է Գորիսցա երկիրը: Գիտնականները գտնում են, որ դա Գորիսն է: Գորիսում գտնվել է նաև Արտաշես II թագավորի (189-160 մ. թ. ա.) արամեերեն արձանագրության սահմանաքար: Բնակավայրը միջին դարերում գտնվել է ներկայիս Գորիսից արևելք՝ համանուն գետի ձախ ափին, կոչվել է հին Գորիս և համապատասխանում է Ստեփանոս Օրբելյանի հիշատակած (13-րդ դ.) Գորու և Գորայք գյուղերից մեկին: Գորիսն առանձնահատուկ է ժողովրդական ճարտարապետության լավագույն նմուշներ հանդիսացող բնակելի տներով: Դարերի ընթացքում տեղացիները հմտացել են քարերը շարելու յուրովի ոճով՝ իրար մեջ ագուցված, ծեփիչով (մալա) քաշել են շաղախը և այդպես խճանկարի տեսք տվել պատերին (տեղի բարբառով ասում են բարքաշ): Այդ տները առանձնահատուկ են նաև պատշգամբներով, դարպասներով, ճաղապատ պատուհանների զարդանախշ հորինվածքներով, որոնք յուրահատուկ հմայք են տալիս քաղաքին: Հայկական ավանդական այնպիսի արհեստների կենցաղավարումը, ինչպիսիք են՝ մետաղագործությունը, բրդի մշակումը, կարպետագործությունը, ինքնատիպություն են հաղորդում Գորիս քաղաքին, ինչպես նաև՝ Գորիսում ավանդաբար նշվող «Բակունցյան օրեր» համաքաղաքային տոնակատարությունը, Սյունյաց ավանդույթների և թթի փառատոները: Գորիսի մշակութային կառույցներից են՝ Գուսան Աշոտի անվան մշակութային կենտրոնը, Երկրագիտական թանգարանը, քաղաքային պատկերասրահը, գրադարանների կենտրոնացված համակարգը, ֆիլմադարանը, Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Ա. Բակունցի տուն-թանգարանը, Երևանի գեղագիտական դաստիարակության կենտրոնի Գորիսի մասնաճյուղը, Ս. Խանզադյանի տուն-թանգարանը: Գորիսը հարուստ է պատմամշակութային արժեք ունեցող շուրջ 290 հուշարձաններով, այդ թվում են բնակելի տներ ու բնակելի քարայրներ, եկեղեցիներ, խաչքարեր, տապանաքարեր, արհեստագործական արտադրության վայրեր՝ ձիթհան (սրանոց) և բրուտանոց, ջրաղացներ, հին գյուղատեղիներ, քարավանատուն, ամրոց և այլն:	Գորիս քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1250-1520 մ բարձրության վրա: Նոր Գորիս քաղաքը կառուցվել է 19-րդ դարի 70-ական թվականներին գերմանացի ճարտարապետի նախագծով՝ գավառապետ, գեներալ Ստարացկու հանձնարարությամբ: Քաղաքի արևելյան մասում է գտնվում Հին Գորիսը (Կյորես) կամ Գորիս գյուղը՝ քարանձավային բնակավայրերի մի ամբողջ շարք, որը տեղացիներն անվանում են «Լաստի Խութ»: Քաղաքը հյուսիսից հարավ հատում է Վարարակն գետը: Գետահովտի աջակողմյան հատվածում բարձրանում է «Քարե անտառը», որը գտնվում է անտառապատ հովտում և շրջապատված է քարայրների շարքերով: Տարածքում առանձնահատուկ են քարանձավները, որոնցում ներկայում իրականացվող մշակութային փոխակերպումները նպաստավոր խթան են մշակութային զբոսաշրջության զարգացման համար:
6.	Խաչիկ գյուղ, ՀՀ Վայոց ձորի մարզ	Խաչիկ գյուղը Վայոց ձորում առանձնանում է գյուղի ավանդական տնտեսական զբաղմունքների պահպանվածությամբ: Միակ գյուղն է ողջ	Խաչիկ գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզում՝ Եղեգնաձորից 40 կմ դեպի

		տարածաշրջանում և շատ եզակիներից ամբողջ Հայաստանում, որտեղ դեռևս կարելի է հանդիպել ճախարակով թել մանելուց մինչև գորգ գործելու տեխնոլոգիական ողջ շղթայի իրականացմանը: Խաչիկցի Սոնա Մակարյանը այսօր էլ իր տանը պահպանում և բանեցնում է ավանդական սանդերքը, ճախարակը, գորգագործական տորքը և մնացած բոլոր անհրաժեշտ գործիքները: Գյուղում պահպանված են նաև ավանդական հայկական գլխատան նմուշներ, որոնք նույնպես հազվադեպ հանդիպող մշակութային արժեքներ են ողջ Հայաստանի տարածքում: Կենցաղավարում են ավանդական երգային և նվագարանային մշակույթի տարբեր ժանրեր՝ աշխատանքային երգեր, օրորներ, տոնական ծիսական երգեր և այլն: Պահպանվել է նաև թոնրում ավանդական եղանակով գաթա թխելու սովորույթը: Գյուղը հայտնի է իր գաթայի փառատոնով, որը նշվում է որպես համահայկական միջոցառում, որի ժամանակ թխվում և ներկաներին է մատուցվում Հայաստանի ամենամեծ գաթան (տրամագիծը շուրջ 2 մետր): Գյուղում պահպանվել են նաև ավանդական հայկական գինեգործության, մրգաջիների պատրաստման, մեղվապահության, այգեգործության, պանրագործության ավանդույթները: Խաչիկ գյուղի տարածքում և շրջակայքում են գտնվում ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում գրանցված 22 հուշարձաններ՝ խաչքարեր, հնավայրեր, հին գյուղատեղիներ, այդ թվում՝ նաև նշանավոր պատմական Ամաղու գյուղատեղին, միջնադարյան եկեղեցիներ ու մատուռներ: Գտնվել է գյուղի կառուցումը վկայող միջնադարյան արձանագրություն, ինչը փաստում է գյուղի շատ հին լինելը: Այստեղ է գտնվում միջնադարյան նշանավոր վանական համալիրներից մեկը՝ Քարկոփի Ս. Աստվածածին վանքը՝ կառուցված 910 թվականին: Գյուղից վանք տանող հին ճանապարհով կարելի հասնել նշանավոր Նորավանք վանական համալիր:	արևմուտք, ծովի մակարդակից 1800-1900 մետր բարձրության վրա գտնվող բարձր լեռնային գոտում: Հարավ-արևելքից և արևմուտքից սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը՝ Նախիջևանին: Տարածքում լավ աճում են ընկույզ, խաղող, խնձոր, սալոր և հացահատիկային մշակույթներ: Բնակչությունը զբաղվում է հացահա-տիկային, կերային մշակույթների մշակությամբ, այգեգործությամբ և անասնաբուծությամբ: Ներկայում գյուղն ունի մոտ 250 ընտանիք:
7.	Վերին Դվին գյուղ, ՀՀ Արարատի մարզ	Արարատի մարզում գտնվող Վերին Դվին գյուղը մոտ 200 տարվա պատմություն ունի: Այն հիմնադրվել է 1831 թ.՝ Ռուսաստանի և Իրանի միջև 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրից հետո Պարսկահայքի Խոյ քաղաքից Արևելյան Հայաստան ներգաղթած ասորի բնակչության կողմից: Վերին Դվին գյուղում այժմ ապրում է 2000 ասորի և շուրջ 700 հայ:	Վերին Դվինը գտնվում է Արարատ մարզկենտրոնից 9 կմ դեպի հյուսիս-արևելք, բարձրությունը ծովի մակե-րևույթից՝ 925 մ: Գյուղը հիմնադրվել է 1831 թ.: Գտնվում է հայկական հի-

		Շատ են խառն ամուսնությունները: Գյուղի դպրոցում, ընտանիքներում և բնակավայրի ներսում գործող լեզուն գլխավորապես ասորերենն է: Վերին Դվինը համարվում է Հայաստանի ասորի ազգային փոքրամասնության էթնիկ մշակութային նկարագիր ունեցող բնակավայր: Ասորիների մշակույթի ցայտուն դրսևորումներ են նրանց ազգային խոհանոցը, տոնական արարողությունները, պարերը, հարսանեկան և կրոնական ծեսերը: Այստեղի՝ Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ Առաքելական եկեղեցին կառուցվել է 1831-1840 թթ. ընթացքում և կրում է Առաքյալ Մար Թումայի անունը: Գյուղում եկեղեցին անվանում են նաև Շառա: Եկեղեցու քահանան Արևելքի ասորական ընդհանրական սուրբ առաքելական եկեղեցու հոգևոր հայր Տեր Նիկադիմ Յուխանանն է՝ ծնունդով Վերին Դվին գյուղից: Սովորել է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում, ապա՝ Իրաքում, որտեղ էլ քահանա է ձեռնադրվել: Եկեղեցական ժամերգության և ծեսերի լեզուն ասորերենն է: Եկեղեցի այցելելը ոչ միայն հոգևոր-կրոնական, այլև էթնիկ ինքնահաստատման գործառույթ ունի: Այնուամենայնիվ, Մար Թումայի անունը կրող ասորական եկեղեցի այցելում են նաև Վերին Դվինի և հարևանությամբ գտնվող Ներքին Դվին գյուղի հայերը: Եկեղեցու մոտ՝ ասորի Լյուսյա Եդիգարովայի տան բակում, կա նաև «Մարեզ» անունով հայտնի մատուռ-սրբատեղի: Այս մատուռն աշխարհի տարբեր անկյուններից շատ ասորիներ են այցելում, մոմ վառում, աղոթում, հաճախ նաև մի բուռ հող տանում իրենց հետ: Ըստ ավանդության՝ Մարեզը հիմնադրել է Իրաքից Հայաստան ներգաղթած ասորիների մի ընտանիք, որն իր հետ հայրենիքից հող է բերել. «Էդ հողից մի կտոր ընկնում է հենց այստեղ, որտեղ էլ կառուցում են Մարեզը, ինչը նշանակում է Մարիամ Աստվածածին: Ով գալիս է, ինձ ասում է. «Մայրիկ ջան, մի կտոր հող տանենք սրբից հետներս»,-ասում է այդ ընտանիքի ժառանգ Լյուսյա Եդիգարովան: Մարեզի տոնակատարության օրը հունիսի 14-ն է, որին համայնքը պատրաստվում է հանգանակությամբ: Գլխավոր արարողությունը այդ գիշեր երաժշտության տակ մեծ կաթսաներում յուղով, ալյուրով, կաթով և ձվով հալվա՝ (մորթուխան) եփելն է: Գիշերը եփված մորթուխան առավոտյան փոքր չափաբաժիններով փաթաթում են լավաշի մեջ ու բաժանում համայնքի բոլոր անդամներին, որը զոհաբերություն՝ (մատաղ) է համարվում: Վերին Դվինի բնակիչները օրացուցային Նոր տարուց զատ՝ ապրիլի 1-ին նշում են նաև ասորական Նոր տարին, որի ընթացքում ընտանեկան	նավուրց մայրաքաղաք Դվինի մոտ, ոչ հեռու հայաբնակ Ներքին Դվին գյուղից: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբոստանային մշակույթների մշակությամբ, թռչնաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում մշակվող ամենահայտնի բանջարեղենը լոլիկն է, որին հատկացվում է 300 հեկտարից ավելի տարածք: Վերին Դվինում աճեցված լոլիկը հայտնի է իր որակով, որը գնելու համար հարևան հանրապետությունից՝ Վրաստանից Վերին Դվին են հասնում:

		տոնական խնջույքից զատ՝ նաև համայնքային մեծ մատաղ և ազգային երգ ու պարի մեծ միջոցառում է տեղի ունենում: Վերին Դվին գյուղում երկու ասորական պարային խմբեր են գործում՝ մեծահասակների «Նինևիա» և դպրոցական՝ «Արբելա»: Տոներին, սովորաբար, լուսնի լույսի ներքո ու շարականների կատարմամբ՝ ցուլ է մորթվում, որի միսը բաժանվում գյուղացիներին: Վերին Դվին գյուղը էթնիկ մշակույթի պահպանվածության և զարգացման, ինչպես նաև տարբեր մշակույթների դրական սինթեզի լավ օրինակ է: Գյուղի երկու՝ ասորական և հայկական համայնքները միասնական են և բոլոր՝ նույնիսկ էթնիկ համարվող ծեսերն ընդունվում և համահավասար են կատարվում: Թե՛ ասորիների և թե՛ հայերի համար հավասարապես սիրելի է ասորական բյուշալան՝ հայկական թանապուրի մի տարբերակը:	»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 3
Երևան